ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

- ք. Երևան, փ. Բուզանդ 1/3
- г. Ереван, ул. Бузанда 1/3
- 1/3 Buzand st., Yerevan
- www. expertise@env.am

Հեռ. (374 011) 220-218
Тел. (374 011) 220-218
Tel. (374 011) 220-218

ՇՐՄ-26/16Բ

«04» 02 2025թ.

Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավար
պարոն Ջասմ Մախմուդովին

Հարգելի՛ պարոն Մախմուդով

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2025 թ. փետրվարի 21-ին՝ ժամը 12:00-ին Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրի գործող դպրոցի դահլիճում տեղի կունենա «Էկո Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Ռյա Թազա բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Խնդրում եմ աջակցել և ապահովել ազդակիր համայնքի/բնակավայրի և շահագրգիռ հանրության, համապատասխան մասնագետների մասնակցությունը հանրային լսմանը:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), Ալագյազի համայնքապետարանի և նախաձեռնողի (առկայության դեպքում) պաշտոնական կայքերում: Տեղեկատվություն ստանալու և առաջարկություններ ներկայացնելու համար դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին (հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, էլ.փոստ՝ envexpertise@env.am):

Հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կտեղադրվեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական
կենտրոն» ՊՈԱԿ, Սվետլանա Կիզիրյան, հեռ. (011) 22-02-15